ԳԼՈՒԽ Ժ.

Ամենայն բնութիւն մարդոյ 'ի յերեսս երկրին հայոց եթէ 'ի հաւատացեալ 'ի Քրիստոս և եթէ անօրէն կացցէ և մնասցէ ազատապէս տէր և թագաւոր 'ի վերայ ընչից իւրոց, միայնակ հնազանդելով Օրինացն հայոց և հատուցանելով հարկ մաքս հաս և այլն ըստ Օրինօք առ տունն Հայոց։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Առատապէս տացցի երկիր վիճակի Սուրբ Աթոռին Հայրապետին Հայոց, նա ևս ըստ իւրաքանչ վանօրէից և ապաշխարօղաց զի վայելեսցեն ազատապէս, արտաքոյ մաքսից հարկից և հասից, զի մի պակասեսցի կերակուր և զգեստ կրօնաւորաց մերոց, որ նոքայ ոչ երբէք հարկեսցեն իրաց և ծախիցեն ժամանակս իւրեանց վասն հարկաւորութեան անձանց իւրեանց, եթէ ոչ կալով մնասցեն ըստ պատուոյ իւրեանց յարաժամ բարեխօս վասն մեր առ Տէր արարիչն մեր զի ներեսցէ սղալանս յանցանաց մերոց։

ԳԼՈՒԽ ԺԲ.

'Ի ծայրագոյն Հայրապետէ ամենայն Հայոց հանդերձ բոլոր եպիսկոպոսիւք ընտրեսցեն 'ի մի-